№ 75 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 4 — 1892 — ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 4 № 75

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խօլէրայի առիթով. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական տեղեկութիւններ խօլէրայի մասին. Ամբոխի անարգարութիւնը. Խօլէրայով վարակումը. Խրատներ խօլէրայի մասին. Նամակ Ղզլարից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՏԵՂԵԿԱՏՈՒ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Խօլէրան Շուշում.

ԽՕԼԷՐԱՅԻ ԱՌԻԹՈՎ

Ամենքը խօսում են խօլէրայի մասին ոչ թէ միայն մեր երկրում, բայց և ամբողջ Ռուսաստանում: Լրագիրները լի են խորհուրդներով խօլէրայի դէմ առաջն առնելի միջոցների մասին: Սակայն այդ տեսակ խորհուրդներից շատերը կրում են շատ անգամ անբարոյականացնող, կոպիտ եսականութեան բնաւորութիւն:

Անհերքելի է, որ ամենագործնական միջոցը խօլէրայի տարածման առաջն առնելու համար՝ մաքրութիւնն է, սանիտարական օրինակելի դրութիւնն է, անմաքրութիւնների դեզինֆեկցիան է, ջրերի մաքրելն է և այլն: Այդ միաքը կարելի է ապացուցանել և օրինակներով:

Հնդկաստանի Օրէվէր քաղաքը, որը մի սուրբ տեղ է համարվում հնդկացի բնիկներից, տան և երկու տարի միանգամ գրաւում է, որպէս ուխտատեղի, հազարաւոր ուխտաւորներին: Անցեալ տարի պիտի կայանար այդ կրօնական տօնը, սակայն Օրէվէրի շուրջը տիրում էր խօլէրան: Ի՞նչ կասկած որ հիւանդութիւնը պիտի աւելի էլ տարածվէր հազարաւոր ժողովրդի մի տեղ հաւաքվելուց....

Սակայն ի՞նչ արաւ Հնդկաստանի անգլիական կառավարութիւնը. „Այդպիսի դիպուածում մեզ մօտ, ասում է Պետերբուրգի „Сынъ Отечества“ լրագիրը, այլ և այլ փրկարար պրօէկտներ առաջարկողները անպատճառ խորհուրդ կը տային կառավարութեանը արգելել ուխտաւորներին հաւաքվել ուխտատեղում, արգելել մարդկանց միմեանց նամակներ գրել, արգելել նոյն իսկ խօսել իրար հետ, որպէս զի ցաւը չը տարածվի շնչառութեամբ, խորհուրդ կը տային շրջապատել կասկածելի հիւանդներին, թոյլ տալով որ հիւանդները անօգնական կերպով մեռնէին, խորհուրդ կը տային այդ միջոցներով տիրող երկիւղը սաստկացնելու, աւելի էլ ուժեղացնելով աղետի զօրութիւնը, չորս կողմ սարսափ զցելով, և այդպիսով աղետին հեռվհետէ ճանապարհ բանալով իր ոչնչացնող գործը շարունակելու.... Եւ այդ բոլորը յանուն մեր հանգստութեան ու ապահովութեան, քանի որ մեր թոյլ և զգայուն ջղերը արդէն խանգարվում են լոկ այն մտածմունքից, որ մեզ կարող է պատահել խօլէրայով հիւանդ մի բաղուեցու հետ խօսելու.... Այո՛, մենք այսպէս կը վարվէինք, բայց գործնական անգլիացիք ուրիշ կերպ վերաբերվեցան հարցին. նրանք անմիջապէս անցկացրին դէպի Օրէվէր քաղաքը մաքուր և խմելու պիտանի ջուր, մաքրեցին քաղաքը անասելի կեղտոտութիւնից,—և ուխտագնացութեան ամբողջ տեւողութեան ժամանակ խօլէրայի ոչ մի դեպք չը պատահեց Օրէվէրում; այն ինչ քաղաքը շրջապատող ուրիշ տեղերում բաւական խիստ էր տիրում նոյն վարակիչ ցաւը: Սակայն անցան ուխտագնացութեան օրերը, ղրանց հետ միասին անցաւ և երկիւղը,—և Օրէվէրի բնակիչները փոքր առ փոքր սկսեցին նորից անփոյթ կերպով վերաբերվել դէպի քաղաքի մաքրութիւնը. և ահա երբ ուխտաւորների բազմութիւնն արդէն չը կար, չը կար ուրեմն և խիստ հսկողութիւն,—խօլէրան իր համար պատեհ հող գտնելով քաղաքի անմաքրութեան մէջ, նոր սկսեց յայտնվել և նոր սկսեց հնձել մարդկային զոհերը: Կարծում ենք փաստը բաւական պերճախօս է և այդ տեսակ փաստեր անթիւ են:“

Այդ փաստը բերելուց յետոյ, „Сынъ Отечества“ լրագիրը սաստիկ յարձակվում է մայրաքաղաքի այն լրագիրների դէմ, որոնք առաջարկում էին առանձնացնել Բաղու քաղաքը, շրջապատել նրան կարանտիններով և նրա բնակիչներից ոչ ոքին չը թոյլ տալ դուրս գալ քաղաքից, մի խօսքով զոհել ամբողջ Բաղուն միացած Ռուսաստանը փրկելու համար:

„Մենք արդէն ասեցինք, որ միակ հաստատ և գործնական միջոցը սահմանափակել հիւանդութիւնը, աւելացնում է լրագիրը, քաղաքի առողջացնելն է, և ոչ թէ այն թաթարական նահապետական միջոցը, որ առաջարկում են մեր պուբլիցիստներից ոմանք: Պէտք է արմատական կերպով մաքրվել և ապա համերաշխ կերպով, ձեռք ձեռքի տուած յանձն առնել ընդհանուր թշնամու դէմ եռանդոտ մաքառումն:“

Եւ ճշմարիտ ի՞նչ անկարագրելի զայրոյթ կը պատճառէր դիցուք 1884 թուին Ֆրանսիական կառավարութիւնը, երբ սարսափելի խօլէրա էր տիրում Մարսէյլում, Տուլօնում և առհասարակ հարաւային Ֆրանսիայում, եթէ նա այդտեղի բնակիչներին արգելէր տեղափոխվել դիցուք Պարիզ կամ Լիոն, կամ եթէ հարևան շվէյցարական կառավարութիւնը արգելէր Ֆրանսիացիներին մտնել Շվէյցարիա: Ընդհակառակն, Շվէյցարիան ոչինչ կարանտին չը կանգնեցրեց իր սահմանների վրա և այն աստիճան վատահ էր թէ իր մօտ տիրող առասպելական մաքրութեան պատճառով խօլէրայի բացիլները չէն կարող զարգանալ Շվէյցարիայում, որ անարգել թոյլ էր տալիս Մարսէյլից եկողներին ահագին բազմութեամբ, ամբողջ գնացքներով մտնել Շվէյցարիա և տարածվել ամբողջ երկրում: Եւ ճշմարիտ, մինչդեռ 1884 թուին խօլէրա էր տիրում Սպանիայում, Իտալիայում, հարաւային Ֆրանսիայում, մասամբ Աւստրիայում,—նրանց սահմանակից Շվէյցարիան և Գերմանիան ազատ մնացին այդ ախտից: Ֆրանսիայի մայրաքաղաք, Պարիզն էլ, այն աստիճան օրինակելի սանիտարական պայմանների մէջ էր դրված, որ 1884 թուին Մարսէլից դէպի Պարիզ փախչողները չը կարողացան վարակել 3 միլիօն բնակիչ ունեցող քաղաքը և նոյն թուին Պարիզում խօլէրայի շատ փոքրաթիւ դէպքեր պատահեցան:

Ի՞նչ անկարագրելի զայրոյթ, ասում ենք, կը տիրէր Ֆրանսիայում, եթէ 1884 թուին մէկն առաջարկէր փակել Մարսէյլը կարանտիններով, շրջապատել հարաւային Ֆրանսիան և զոհել երկրի այդ մասի բնակիչներին, նրանց մահվան զոհ դարձնել հիւսիսային Ֆրանսիան փրկելու համար: Իսկ մեր մայրաքաղաքների մամուլի մի քանի օրգանները այդ նոյն միջոցը առաջարկում էին Բաղուի վերաբերմամբ: Եւ դուցէ բազուցիներին այդ լուրը հասել էր և այդ էր պատճառը, որ նրանք սարսափահար դրութեան մէջ՝ փախչում էին ամէն կողմ, դեռ չը սպասած, որ նրանց փակէին Բաղուի մէջ:

Եթէ մենք դեռ ևս հասունացած չենք համամարդկային համերաշխութեան զգացմունքն ըմբռնելու համար, վերջացնում է իր խօսքը „Сынъ Отечества“ լրագիրը, բայց մենք հաւատացած ենք որ գոնէ մարդասիրական ամենատարրական զգացմունքը մեզ համար մատչելի կարող է լինել:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՕԼԷՐԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Երեքշաբթի, յունիսի 30-ին, առաւօտեան, Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում խօլէրայով հիւանդներ կային 14 տղամարդիկ և 2 կանայք. օրվայ ընթացքում եկաւ 1 տղամարդ—Տէր-Խաչատուրեան 7-դ քաղաքամասից, Մաչաբելսկայա փողոցից, Դուրդուլեվի տնից, և 3 կանայք՝ Տիտերեվա. 8-դ քաղաքամասից, № 33 տնից, Ամատունեան փողոցի վրա, Պիլի-շվիլի՝ 9-դ քաղաքամասից, Նաբերեժնայա և Սեմեոնովսկայա փողոցների անկիւնում գտնվող Քարթվելովի տնից, և Պիչկովա՝ 9-դ քաղաքամասից, Մուսալիովի փայտասղոցարանից Մաղաթեան կղզու վրա. առողջացան՝ մէկ տղամարդ—Կարպով և երկու կանայք՝ Բալչեվա և Բիբինինա. մեռաւ 1 տղամարդ—Օրուջ-օղլի: Մի և նոյն հիւանդանոցում յունիսի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՕԼԷՐԱՆ ՇՈՒՇՈՒՄ

—

Այս չարաթ խօլէրային հիւանդութիւնը Շուշում ունեցաւ երկու կերպարանք. սկզբում սաստկացաւ, համաճարակումի կերպարանք ընդունեց, բայց վերջին օրերը բաւական մեղմացաւ. յունիսի 25-ին, պաշտօնական տեղեկութիւններին նայած, 17 մարդ հիւանդացաւ, 26-ին այդ թիւը իջաւ յանկարծ 4-ի, իսկ 27-ին նոր հիւանդացողների թիւը 3 էր: Այլ ևս չեն կրկնվում կատաղի նշաններ ունեցող ծանր խօլէրայի դէպքեր, երբ հիւանդները մեռնում էին 8—12 ժամի ընթացքում: Այդպիսի դէպքեր ամբողջ ժամանակ երեք հատ էին միայն: Եւ այսպէս, վերջին երկու օրերը ներկայացնում են խօլէրայի թուլանալու նշանները: Ինչ կը լինի յետոյ, արդեօք օրից օր թուլանալով կը վերջանայ սարսափելի հիւանդութիւնը, թէ միայն ժամանակաւոր դադար է այս, որ եղանակի մեղմութիւնից, կամ, կարելի է ասել, ցրտութիւնից է առաջացել,—այդ չը գիտենք: Բայց ինչպէս և լինի, քաղաքում այժմ հանդարտութիւն է տիրում:

Չը լինի թէ այս հանդարտութիւնը թուլացնէ քաղաքացիներին և սովորական անհոգութեան մատնէ: Այդ կը լիներ մի շատ վատ ինքնախաբութիւն, որ դժուար հետևանքներ կառաջացնէր: Պէտք է ոչ մի ժամանակ աչքից չը գցել սարսափելի թշնամուն, քանի որ նկատում ենք նրա ներկայութիւնը: Առանց այդ էլ հիւանդութեան դէմ մաքառում ենք ողորմելի միջոցներով: Մինչդեռ միւս քաղաքները սաստկակ հազարներ են ծախսում մաքրվելու և հիւանդութեան առաջն առնելու համար, Շուշին պիտի յոյս դնէ այն 750 ռուբլի խեղճ գումարի վրա, որ հաւաքել են մի քանի մարդիկ և որի մեծ մասն արդէն ծախսված է: Քաղաքը մի հատ հիւանդանոց պահելու համար իր միջոցներից 2000 ռուբլի է բաց թողել. բայց սա շատ քիչ է: Չը պէտք է բաւականանալ միայն հիւանդներին խնամելով. ամենամեծ ուշադրութիւնը պէտք է դարձնել այն կէտի վրա, որ հիւանդացողների թիւը շատ քիչ լինի: Իսկ այդ կարելի է ասել, եթէ քաղաքը միջոց ունենայ կեղտոտութիւններից մաքրվելու: Շուշում, յայտնի է, չքաւոր դասակարգը ահագին մեծամասնութիւն է կազմում: Կան մեծ թաղեր, ուր մի հատ արտաքնոց չը կայ. այդպիսի մի թաղում էր անցեալ շաբաթ յամառութեամբ բուն դրել խօլէրան: Աղքատ դասակարգը հիւանդութեան դէմ կռուելու միջոց և կարողութիւն չունի—ահա ամենավտանգաւոր երևոյթը. և աղքատութեան այդ անկարողութիւնը պիտի իր միջոցներով վերացնէ քաղաքը, որն այս բօպէին 22 հազար ռուբլի պահեստի գումար ունի: Էլ ո՞ր օրվայ համար են պահում այդ գումարը. այժմ է այն մեծ կարօտութիւնը, որ սոսկալի չարիք կը դառնայ մեր գլխին, եթէ անհոգութեամբ վերաբերվենք գործին, մոռանանք որ միջոց խնայել անկարելի է և դեռ շարունակենք կարծել թէ քաղաքը պիտի ունենայ իր անշարժ դրամագլուխը: Չրի հարցը իր տագնապալից կերպարանքի մէջ է շարունակում մնալ. ժողովուրդը ակամայ, մեծ ահով խմում է քաղաքի աղբիւրի հոտած ու նեխված ջուրը: Դէզինֆեկցիական միջոցներ ոչ միայն չունեորի, այլ և հարուստի համար դժուար է գտնել. այս բօպէին քաղաքումս կարբոլեան թթուատ ճարել շատ դժուար է. հաստատ իմացայ որ մի դեղավաճառական մագազինում կարբոլեան թթուատի ֆունտն արժէ... 2 ռուբլի 60 կոպ.:—Հնարաւոր է որ այսպիսի հանգամանքներում կատարվեն գիտութեան պահանջները...

Գիւղերում օրից օր տարածվում է հիւանդութիւնը, բայց այնտեղ էլ դեռ այնքան սուր կերպարանք չէ ստացել: Գիւղերում բժշկական և առողջապահական միջոցների մասին հասկացողութիւն չը կայ. այնտեղ դեռ թաղաւորում է հնադարեան մեթոդը—հիւանդին տարրելը և արիւն առնելը: Շուշու ահագին գաւառը ունի մի հատ բժիշկ. եթէ սա փորձէ միայն գիւղերը շրջել, մի կողմ թողնելով հիւանդներին օգնութիւն հասցնելը, դարձեալ ժամանակ և կարողութիւն չի ունենայ: Մնում է որ տգէտ և անդրազէտ տանուտէրները հաղորդեն հիւանդութեան ընթացքի մասին, սակայն նրանք կարող են որոշել թէ որն է խօլէրայով հիւանդացածը...

Բաղուից դեռ գալիս են: Եկողները սարսափելի բաներ են պատմում: Նաւթային մայրաքաղաքը մատնված է ամայութեան. այնտեղ մի միջոց միայն գիտեն—գլուխ վերցնել, փախչել: Միլիոնների հարուստ քաղաքը ընկճված է մի պառաւական անկարողութեան ձեռքում: Ամէն բան պէտք է անէ ոստիկանութիւնը, յոյս ու փրկութիւն միայն նրանից են սպասում, մինչդեռ գիտութիւնը պահանջում է հասարակական լայն կազմակերպած կռիւ սև թշնամու դէմ: Խօլէրային աղետը լաւ ապացուցանում է, որ Բաղուն բազմաթիւ միլիոնատէրերի համար հայրենիք դառնալ չէ կարող. ամէն մի արտասովոր դէպքում նրա մէջ հարստացած, փարթամացած մարդիկ պատրաստ են մոռանալ, ուրանալ նրան և հեշտութեամբ թողնել նրան ճակատագրի կամքին:—Եթէ այդպէս չը լինէր, Բաղուն այնպիսի արագութեամբ և հեշտութեամբ չէր տարածի խօլէրայի թոյնը Կովկասի բոլոր անկիւններում:

Շուշու քաղաքային հիւանդանոցը վճռել են տեղափոխել, տանել քաղաքից դուրս: Միայն պէտք է այնտեղ ժամանակաւոր չինութիւններ չինվեն հիւանդանոցի համար. եթէ այդ կարելի լինի անել ժողովարարութեամբ հաւաքած փողով, այն ժամանակ խնայն կը տեղափոխեն հիւանդանոցը: Այդ հիւանդանոցում առ այժմ կան 10 մահճակալներ. բայց եթէ հիւանդութիւնը սաստկանայ, մահճակալների թիւը կը բազմանայ: Հիւանդանոցը կառավարում է, ինչպէս գրել եմ, երիտասարդ բժիշկ Ե. Ադամալեան, որին օգնում են Վահան սարկաւագ Դաղեան և մի ֆելդշեր: Եթէ պ. Ադամալեան պատահաբար Շուշում չը գտնվէր, շատ դժուար կը լինէր գրութիւնը: Պարոնը, յանձն առնելով իր հայրենի քաղաքում մնալ խօլէրայի ժամանակ, ազատել է քաղաքային բժիշկին հիւանդանոցը պահելու պարտաւորութիւնից: Ամբողջ քաղաքը բաժանված է երկու մասի. մէկը, աւելի մեծը, գտնվում է բժշկապետ Տէր-Գրիգորեանի հսկողութեան տակ, միւսը քաղաքային բժիշկ պ. Բահաթրեանի հսկողութեան տակ: Երկու բժիշկները անդադար շրջում են, ղեկավարում են սանիտարական խմբերը, որոնք գործում են օրինակելի եռանդով: Երկու երեք խօսքով չէ կարելի բացատրել այդ սանիտարական խմբերի տուած մեծ օգուտը. ուստի դրանց գործունէութեան մասին կը գրենք մի առանձին, աւելի մանրամասն յօդուած:

Յունիսի 28. Լ.

30-ին երեկոյեան խօլերայով հիւանդներ կային՝ 13 տղամարդ և 3 կին. դիշերվայ ընթացքում եկան 3 տղամարդ՝ Պրուշինսկիյ 1-ին քաղաքամասից, Նէչվատալենկօի տնից, Վերայի զառիվայրի վրա, Զուբով՝ 3-դ քաղաքամասից, նախկին հեռագրական գրասենեակի շինութիւնից և Վալի-օղլի՝ 6-դ քաղաքամասից, Միրաբաշի քարվանսարայից, Վօրոնցօվեան փողոցի վրա: Բացի դրանից 7-դ քաղաքամասից բերված է Հալաբարից մի անցյալ մարդ, որը հինգ րօպէից յետոյ վախճանվեց. մեռաւ մէկ կին (Տիւտերեվա). յուլիսի 1-ին առաւօտեան ընդամենը կային 16 տղամարդիկ և 1 կին: Լաւարաբօվսկայա փողոցի վրա, 7-դ քաղաքամասում, հիւանդացաւ խօլերայի նշաններով Թիֆլիսի քաղաքացի Սօլոմոն Անիեվ, որը թողված է իր բնակարանում:

—

Ելիսաւետպոլի նահանգապետը հաղորդում է, որ յունիսի 30-ին Շուշի քաղաքի հիւանդանոցը մնան 9 հիւանդներ, մեռան 6, առողջացան 3, կան 28 հիւանդներ. գաւառի հիւանդանոցները մնան 14, մեռան 9, առողջացան 3, կան 5 հիւանդներ. Զէվանշիրեան գաւառում հիւանդացան 3, մեռաւ 1, առողջացան 10, կան 12 հիւանդներ: Ելիսաւետպոլ քաղաքում հիւանդացան 2, մեռաւ 1. գաւառում կան 30 հիւանդներ. Նուխի քաղաքում հիւանդացան 3, մեռաւ 1, կան 2 հիւանդներ. Զէբրայիլի գաւառում մեռան 3 պարսիկներ, որոնք վերադառնում էին իրանց հայրենիքը: Ընդամենը նահանգում կան 79 հիւանդներ:

—

Բաքուի նահանգապետը հաղորդում է, որ յունիսի 30-ին խօլերային հիւանդանոցն են մտել 21 հոգի, նրանցից եկօղներ 16. խօլերայով հիւանդների ընդհանուր թիւից մեռան 18, եկօղներ 13, առողջացան 5, մնացին հիւանդանոցում 150, զբոսանցից եկօղներ 102. հիւանդանոցից դուրս մեռան 30, դրանցից եկօղներ 13. Բաքուի շրջականերում հիւանդացան 8, դրանցից եկօղներ 4. ընդհանուր թիւից մեռան 9, եկօղներ 6, առողջացան 2. Սալիանի պահեստի զօրքի հիւանդանոցը մտաւ 1 հիւանդ, մնացին 26, նահանգում հիւանդացան 16, մեռան 11 հոգի:

—

Դաղստանի նահանգապետը հաղորդում է, որ յունիսի 30-ին Կիւրինեան շրջանում կրկին հիւանդացան 3. Պետրովսկում առողջացան 7. մընում են հիւանդներ՝ Պետրովսկում—2, Կիւրինեան շրջանում—8, Սամուրեան—17, Դարգինեան շրջանում 21 և Կայտագո-Տարսարանեան—10.

—

Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում յուլիսի 1-ին առաւօտեան խօլերայով հիւանդներ կային 16 տղամարդիկ և 2 կանայք. օրվայ ընթացքում հիւանդանոց եկողներ չը կային. օրվայ ընթացքում դուրս գնաց հիւանդանոցից 1 տղամարդ. մեռան 4 տղամարդիկ. յուլիսի 1-ին երեկոյեան հիւանդանոցում կային 11 տղամարդիկ և 2 կանայք: Գիշերվայ ընթացքում եկան 4 տղամարդիկ՝ Գուլիաեվ, Ադելխանովի գործատնից, Վօրոնցօվկայա փողոցի վրա, 6-րդ քաղաքամասում, Մայէր՝ ձիաքաշ երկաթուղու պարկից, 10-րդ քաղաքամասում, Բէրձէնով՝ № 73 տանից Լաւրաւորնայա սլոբոդկայից, 1-ին քաղաքամասում և Բէվին՝ Աբուլաձէի № 25 տանից, Լաւրաւորնայա սլոբոդկայից, 1-ին քաղաքամասում: Հիւանդանոցից դուրս գնացողներ չը կային. կան հիւանդանոցում 15 տղամարդիկ և 2 կանայք: 11-րդ սանիտարական բաժնի բժիշկ Բոտինեանց հաղորդեց 7-րդ քաղաքամասի պրիստավին, որ յուլիսի 1-ին եկեղեցեան Նաթլուղում հիւանդացաւ խօլերայի կասկածելի նշաններով իշխան Գրիգոր Արղութինսկի—Դոլգորուկի: Հիւանդը բժշկվում է տանը: Դեզինֆեկցիա է կատարված:

ԱՄԲՈՒԻ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

—

Մէկ ամիս է արդէն, որ Թիֆլիսի քաղաքագլուխը և քաղաքային վարչութիւնը, բժշկական մարմինը և սանիտարութիւնը պատերազմ են յայտնել սոսկալի խօլերային:

Մէկ ամիս է արդէն, որ այդ մարդիկ, իրանց հանգստութիւնը հասարակութեան բարիքին զոհելով, իրանց առողջութիւնը ամբոխի բարեկեցութեան համար գետին դնելով, Թիֆլիսի կիզիչ արեգակի տակ, գիշերվայ քունը կորած, ցերեկվայ հանգիստը, ամեն ճիգ գործ են դնում, իրանց անձն մոռացած, որ օգնութեան ձեռք պարզեն սպառնացող անդութ խօլերայից Թիֆլիսը փրկելու համար: Թիֆլիսի առողջապահութեան կազմակերպութիւնը, գործողների անձնուիրութիւնը օրինակ են դառել միւս քաղաքներին, որոնք «մատով են ցոյց տալիս մեզ վրա»:

Գործողների այս անձնուէր գործունէութեան արդիւնքն այն եղաւ, որ քսան օրվայ մէջ խօլերան մեր քաղաքում չը զարգացաւ, այն ինչ Բաքուում մի շաբաթվայ մէջ զոհերի թիւը 100-ի էր հասել, և այսօր նա բոլորովին անայցել է:

Այն ինչ ամբոխը, իր դառնութեան մէջ, անմիտ, անարդար, բայց սարսափելի մեղադրանք է բարդում մեզ վրա:

Երկիւղից և կսկիծից կուրացած, նա պղծելով ամեն մի վեհ և սուրբ զգացմունք, մեղադրում է բժիշկներին, թէ նրանք չեն խնայում հիւանդներին, այլ ընդհակառակը թունաւորում են նրանց!... Միմիայն չուարած և յուսահատ մի ամբոխ կարող էր այս աստիճան անարդար դտնվել դէպի իր բարեկամները....

Մեր ասիականները այժմ մի պարկի մէջ մտնեն ածում զանազան անվնաս տնային դեղեր, որպէս զի, մինչև բժշկի վրա հասնելը մի որ և է օգուտ կարողանան հասցնել հիւանդներին... և նոյն ապերախտ ամբոխը մեղադրում է ասիականութիւնը, պնդելով որ այդ չէրում թոյն է պարունակվում:

Այդ անհիմն կասկածներով հասարակութիւնը չէ կարող վհատեցնել մեզ: Մենք կը շարունակենք նրա փրկութեան ծանր գործը, ինչ մեղադրանքներ էլ որ բառնայ նա մեզ վրա:

Մենք կը գործենք, յուսալով որ երբ վտանգը անցած կը լինի, նոյն ամբոխը խելքի կը գայ և իր զոհունակութիւնը ցոյց կը տայ իրան փրկող անձանց, որոնց անխոնջ զեկավարն է այսօր ամենից յարգված, Թիֆլիսի քաղաքագլուխը:

Բժշկապ. Վ. Արծրունի

ԽՕԼԷՐԱՅՈՎ ՎԱՐԱԿՈՒՄՆ

—

Անցեալ յօդուածում մենք զրեցինք այն մեծ օրէնքը, թէ խօլերային թոյնը օդի միջով չէ անցնում, այլ փոխվում է հիւանդից առողջ մարդուն:

Այն կարծիքը, թէ այս հիւանդութիւնը օդի միջով է անցնում, այսօր բոլորովին անհիմն է համարվում, և մենք իրաւունք ունենք միանգամայն հերքելու այդ, որովհետև այն փաստերը, որոնց վրա հիմնվում էին մի քանի գիտնականներ այդ հին թէօրիան պաշտպանելու համար, այսօր սատանում են նոր գիտական թէօրիային համաձայն բացատրութիւն:

Ընդհանրապէս, երբ տարափոխիկ հիւանդութիւն, խօլերան հիւանդից անցնում է նրան խնամողին, սրանից մի ուրիշին, յետոյ այս երկուսից մօտ բարեկամներին, որոնք տանում են հիւանդութիւնը իրանց տուն, վարակում են տանը ցիներին, դրացիներին, և վերջ ի վերջոյ ամբողջ մի փողոց, մի քաղաք, որտեղից էպիդէմիան անցնում է միւս հարևան երկիրներ և տարածվում ամբողջ հողագնդի վրա: Այսպիսի դէպքեր բաւական են և դժուար չէր լինի բազմաթիւ փաստեր առաջ բերել հաստատելու համար, որ խօլերային թոյնը միշտ մարդու հետ է ընթանում, այնպէս որ եթէ մարդ երբէք յարաբերութիւն չունենայ խօլերայով վարակվածների հետ, նա երբէք էլ չի վարակվի:

Շատ փաստեր ցոյց են տալիս այս կարծիքի ճշդութիւնը: Այսպէս, 1831 թ-ին, սաստիկ խօլերայի ժամանակ, Կայսերական ընտանիքը 10,000 հոգով փակվեցան Պետերհոֆում ու Ցարսկ.-Սելօում և ազատ մնացին ժանտախտից: 1854 թ-ին նոյնը արեց Կ. Պօլսի զինուորական ուսումնարանը: Իսկ 1865 թ-ին ամբողջ կղզիներ, Կրէտը և Սիցիլիան նոյն միջոցով ազատ մնացին սարսափելի էպիդէմիայից:

Այժմ տեսնենք, թէ ինչ կերպով և ինչ ճանապարհով խօլերայով հիւանդացածը վարակում է առողջին: Երբ մենք լաւ հասկանանք խօլերայի տարափոխման եղանակը, այն ժամանակ միայն կարող կը լինենք գիտակցաբար ազատ պահել մեզ վարակումից:

Քանի որ խօլերայի բնորոշ նշանը մարսողական գործարանի (ստամոքսի և աղիքների) հիւանդութիւնն է, վաղուց արդէն բժիշկների ուշքը դարձրած էր հիւանդների արտաթորութիւնների վրա: Անշուշտ նրանց փսխանքի և կղկղանքի մէջն էր գտնվում այն վարակիչ թոյնը, որը, անտարակոյս, մէկից միւսին անցնելով, ճարակում է մարդկութիւնը:

1883 թ-ին, երբ անգլիացիների շնորհով խօլերան ներմուծվեց Բօմբէյից Եգիպտոս, իսկ այնտեղից հետևեալ տարին վարակեց Ֆրանսիական ծովեզրը (Տուլօն, Մարսէլ), Ֆրանսիական և գերմանական կառավարութիւնները գիտական մասնաժողովներ ուղարկեցին էպիդէմիան ուսումնասիրելու: Պրոֆէսսոր Կոխ, որը գերմանական մասնաժողովի գլուխն էր, խօլերայով հիւանդների արտաթորութիւնների մէջ գտաւ մի տեսակ խոշորացուցական, անսահման մանր մարմնիկներ, որոնց նա «խօլերային միկրոբ», «խօլերային բացիլներ», կամ ուղղակի «խօլերային ստորակէտներ» անունները տուաց: Այս վերջին անունը ծագեց նրանից, որ այս միկրոբները ստորակէտի նմանութիւն ունեն: Կոխ այնուհետև գնաց Հնդկաստան, այն սարսափելի Գանգի դելտան, որտեղ, ինչպէս տեսանք, խօլերան բուն է դրել: Այնտեղ գերմանական գիտնականը, նոր հետազօտութիւնների շնորհով, եկաւ այն համոզման, որ խօլերայի պատճառը ստորակէտ բացիլներն են, որոնք զարհուրելի քանակութեամբ գտնվում են հիւանդների արտաթորութիւնների մէջ: Կարևոր է և այն, որ նոյն ստորակէտները Կոխ գտաւ յիշեալ Տանգերի մէջ:

Ուսումնասիրելով իր նորագիտ մարմնիկները, Կոխ հետևեալ դիտումներն արեց.

1) Խօլերայի միկրոբները կամ բացիլները զբաղվում են միմիայն հիւանդի արտաթորութիւնների մէջ. ոչ նրա շնչառութեան, և ոչ արիւնի մէջ այդ միկրոբներից չը կան:

2) Խօլերային բացիլները ապրում և զարգանում են միմիայն խոնաւութեան մէջ, (թաց գետնի վրա, թաց սպիտակեղէնի վրա և այլն). նրանք զարգանում են նոյնպէս և կեղտոտ ջրում: Չորութիւնը սպանում է նրանց, ոչնչացնելով խօլերային թոյնը:

3) Թթու նիւթերը (թթու գինի, թթու ջուր և այլն) նոյնպէս անզօրացնում են խօլերայի թոյնը, նոյնն են անում և զանազան սխտորանիչ նիւթերը, որոնց գործ ենք ածում դեզինֆեկցիայի համար (սուլֆա, կարբոլեան թթու, կուպրոս, կիր և այլն):

Խօլերային սխալ այս յատկութիւնները ճանաչելով, մենք հասկանում ենք, թէ ինչպէս այս սխալը հիւանդից առողջին է անցնում:

Քանի որ խօլերային թոյնը (լինի այդ թոյնը Կոխի բացիլները, կամ մի ուրիշ բան՝ մի և նոյնն է) միայն մարդու աղիքների մէջը կարող է զարգանալ, մարդ այն ժամանակ միայն կարող է վարակվել, երբ կուլ կը տայ այդ թոյնը, իսկ քանի որ այդ թոյնը հիւանդի արտաթորութիւնների մէջն է գտնվում, ուրեմն այս վերջիններն են խօլերայի տարածման պատճառը:

Բժշկ. Վ. Արծրունի

ԽՐԱՏՆԵՐ ԽՕԼԷՐԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Ե. Ախտահանող միջոցները և նրանց գործադրութիւնը

ա) Սուլֆա վերցնել 1 մաս 1000 մաս ջրի համար (մօտաւորապէս 16 դրամ սուլֆա մի չիշ ջրի համար) և աւելացնել 40 մաս աղային թթուածին (սօլեանայա կիսլոտա):

Ծանօթութիւն. Այս միջոցը հասարակութեան ձեռքը չէ տրվում, որովհետև սուլֆան չափազանց զօրեղ թոյն է:

բ) Կարբոլեան թթուածին. 2-ից մինչև 5 մաս վերցնել 100 մաս ջրի համար:

գ) Պղնձային կուպրօս (մեղնի կուպրօս) վերցնել 1-ից մինչև 3 մաս 100 մաս ջրի համար և երկաթեայ կուպրօսը (ժելեզնիյ կուպրօս) 10 մասը 100 մաս ջրի համար:

դ) Զբահանգցրած կիր (նեգաշենայա իզվեստ):

ե) Խլորային կիր (խլորնովայա իզվեստ):

զ) Կիրի ջուր (իզվեստկովօե մօլոկո) չը հանգցրած կրի 20 մասը վերցնել և խառնել 100 մաս ջրի հետ. միշտ պէտք է թարմ պատրաստածը ունենալ:

է) Արտաքնոցները դեզինֆեկցիա անելու (անվտանգ դարձնելու) համար ամեն օր այնտեղ ածել պղնձային կուպրօսի (2 մասը 100 մաս ջրի մէջ) և երկաթային կուպրօսի (ժելեզնի կուպրօսի 1 մասը 8 մաս ջրի մէջ) խառնուրդ, թունդ կարբոլեան (5 մ. 100 մ. ջրի համար) կամ սուլֆայի (1. մ. 1000 մ. ջրի համար խառնուրդի և 40 մաս աղային թթուածնի հետ): Եթէ աղբի փոսերը լի են, անհրաժեշտ է ծածկել աղբը չը հանգցրած կրի հաստ ծալքով, նախապէս ածելով այնտեղ վերոյիշեալ ախտահանող խառնուրդներից մէկը:

ը) Հիւանդների արտաթորութիւնները և փխսանքը անվարակիչ դարձնելու համար կարելի է գործածել նոյն ախտահանող միջոցները նոյն չափով, որչափ է արտաթորութիւնը կամ փխսանքը: Այս նպատակի համար գործադրվում է նոյնպէս ծծմբային կամ աղային թթուածին:

թ) Հիւանդի արտաթորութիւնը կամ փխսանքը յատակից կամ կահ-կարասիից մաքրելու համար գործադրում են սուլֆայի 2 մասը 1000 մաս ջրի կամ կարբոլեան թթուածնի 5 մասը 100 մաս ջրի հետ:

ժ) Հիւանդների և մեռածների անկողինը ճերմակեղէնը և հագուստը անվարակիչ դարձնելու համար, պէտք է այս առարկաները մի ամբողջ օր թողնել կարբոլեան թթուածնի 5 մ. 100 մ. ջրի կամ սուլֆայի 2 մ. 1000 մ. ջրի թունդ խառնուրդի մէջ:

ի) Խակ ընակարանը և առունը ախտահանելու համար պէտք է դիմել բժշկին:

ՆԱՄԱԿ ԴԶԼԱՐԻՑ

—

Յունիսի 23-ին

Հեռագիրը մի ցաւալի լուր դուժեց մեզ Բաքուից, որ այնտեղ խօլերային զոհ է գնացել զղլարցի տեխնօլոգ Գրիգոր Արէշեան զոհ երիտասարդ հասակում: Հանգուցեալը աւարտելով ուսումը Պետերբուրգում, ուղղակի համալսարանից մտաւ զօրանոց—նա Բաքուում զինուորական ծառայութեան մէջ էր, որը և վերջացնելու էր առաջիկայ աշնանը, ապա մտնելու էր կեանքի՝ իրագործելու այն բոլորը, ինչ որ երկար տարիներ վայրիայել էր իր զգայուն սրտում. իսկ այժմ այդ բոլորը անկատար մնաց: Հանգուցեալը իր ընդունակութիւններով և հանճար բնաւորութեամբ մեծամեծ յոյսեր էր տալիս և լայն ասպարէզ էր սպասում նրան մեր հասարակական կեանքում և հէնց ցաւն էլ նրանումն է, որ դեռ ևս ոչինչ չարած, առանց իր ամբարած գիտութեան օգուտները մատակարարելու այլոց, ծնաւ միայն չարչարանքի ու զերեզմանի համար, կսկծի, ցաւի մէջ թողնելով իր ընտանիքը, ծանօթներին և ընկերներին: Արէշեան ամուսնացած էր. իրանից յետոյ անխնամ դրութեան մէջ թողեց կնոջը և մի քանի ամսական աղջկան: Ամիսս 21-ին, կիրակի, հանգուցեալի համար հոգեհանդիսատ կատարվեց տեղիս ս. Լուսաւորիչ եկեղեցում, ուր ներկայ էր մեծ բազմութիւն և բոլորը՝ ծանօթ թէ անծանօթ լալիս էին այդ թանգագին կորստի համար:

Դզլարը նոյնպէս զոհում է սարսափելի հիւր խօլերայի առաջ: Արեւելեան կողմից՝ Դվինադցատի փուսն է (նաւակայան Կասպից ծովում) սպառնում, հարաւից՝ Պետրովսկը, որ տեղերում արդէն խօլերայի դէպքեր եղել են և երկուսն էլ մի օրվայ ճանապարհ են միայն հեռու: Այդ փոքրահաս վտանգի բոլէներին մեր քաղաքը հետևեալ պատկերն է ներկայացնում. մէջը և դուրսը ճահիճներ և շրջապատը գարշահոտ շամբուտներ. բացի դրանից, քաղաքի մէջ եօթանասուն երկանիսամ բակեր, ծածկված մարդաշատ բոյսերով որոնք ծառայում են անցորդների համար իբրև արտաքնոցներ, իսկ հարևանների համար իբրև կոյանոց, աղբանոցներ: Քաղաքի բոլոր արտաքնոցները փոսերով են միանգամայն լցված, իսկ յետ ընկած մասերում արտաթորութիւնները ուղղակի գետնի վրա են. ի վերջոյ չուկան էլ է հոտած, փտած բանջարեղէնով, մանաւանդ խարը (վարունգ), որը անհամար թափվում է շրջակայ գիւղերից:

Անկասկած Դզլարը մեծ զոհեր կունենայ, որովհետև մեր միջոցառը մարդիկը մասը մասի չեն խփում, փախչում են առողջապահ-հոգաբարձու լինելուց, պատճառ բերելով, որ 20—25 օրվայ Նիժնայի ազնավաճառ պիտի ուղևորվեն, իսկ մեր մեծախօս իրաւասունները անխնամ են թողել քաղաքը, բոլորը հրաժարվում են առողջապահական կոմիսիային ծառայելուց: Ինչ անել անօգնական քաղաքային, ում դիմէ: Արտաքնոց մաքրողներ չը կան, բացի մէկից, նա էլ անձեռնհաս է բոլորին հասնել. դեզինֆեկցիայի նիւթեր ամենևին չը կան քաղաքումս. մինչև անգամ մեր միակ դեղատունը 6 պուդ կարբոլեան թթու ունի միայն և այն էլ թանգագին: Վերջապէս՝ հասարակ ամ-

բոլոր անձեռնհաս է նախ՝ առողջապահական կանոններ գիտենալ և միջոցներ գործ դնել. առ այժմ միակ եռանդոտ անձը գտնվեց բժշկապետ Ռամանոս Ճիչվելեան, որը ժողովրդին հանգստացնելու և անկոչ հիւրին դիմադրելու համար մի բովանդակալի դասախօսութիւն արեց ժողովրդի համար և պ. Մ. Մահաջանեանն էլ մի չինութիւն նուիրեց խօլերայով վարակվողների համար: Ում հարկն է ուշադրութիւն ենք դարձնում մեր անօգնական և աննպաստ դրութեան վրա:

Տ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բաթում, 22 յունիսի

«Մշակի № 67-ում տպագրված իմ Նամակի առիթով «Արձագանքը», իրան յատուկ եղանակով, նենգաւոր նկատողութիւն է արել, ցանկանալով ցոյց տալ, որ ես գնացել եմ Էջմիածին ոչ որպէս թղթակից, այլ «մշակականների» կողմից «ի թիւս շատ ուրիշների պատգամաւորների վրա ազդելու համար»:

Սիծաղելի է, որ այդ նկատողութիւնը անում է մի մարդ, որի որպէս պատգամաւոր Էջմիածին գնալը աւելի տարօրինակ էր, քան իմը, և որի համար աւելի ազատ կերպով կարելի էր ասել, որ ի թիւս այլոց ուղարկված էր համախոհների կողմից պատգամաւորների վրա յայտնի նպատակով ազդելու համար, քան ինձ, կամ մերայիններիս:

Մեր կուսակցութեան պաշտպանածը ժողովրդի, ամբողջ ազգութեան սիրելին էր, ուստի ցոյցեր անելու համար ուրիշ քաղաքներից մարդկանց «զակազ» տալու հարկ չը կար. իրանք մեր հակառակորդներն էլ կը խոստովանեն, որ այն ժողովրդական սրտագին ցոյցերը, որոնք հաղարաւոր ժողովրդի կողմից տեղի ունեցան դէպի Խրիմեան և դէպի մեր կուսակցութեան պարագլուխը իմ և ինձ նման մի քանիսի գործը չէին. այդտեղ խօսում էր ժողովրդի իսկական զգացումը, որի վրա կեղծ կերպով ազդել չէ կարելի, թէկուզ հարիւրաւոր մարդիկ էլ «զակազ» տալու լինէք:

Ի դէպ. ինչ հարկ կար հայ-կաթոլիկ Սարուխանեանի անունը տալ, և վերջապէս ինչ հարկ կար մատնանիշ անել, որ նա «Հանդէս-Ամսօրեայում» գրող Դուրեանն է. ինչ կապ ունի Սարուխանեանի կաթոլիկ լինելը, կամ նրա Դուրեան տարագրվելը իմ Էջմիածին գնալու հետ. եթէ ես Կ. Պոլսից «Հայրենիքի» խմբագրութեան կողմից փոխադրութիւնը ստացել եմ Սարուխանեանի միջոցով, միթէ դա իրաւունք է տալիս ասելու, որ հաստատ ազգիւրից գիտենք, որ ծախքի մեծ մասը Սարուխանեանն է տուել, ուրեմն եթէ ես պատահմամբ մի թուղթի միջոցով ստանայի այդ փողը, «Արձագանքը» պիտի գրէր, որ իմ Էջմիածին գնալու ծախքը համախոհների կողմից մահմետական-պարսիկ Հաջի-Ալակբարն է տուել.... այ քեզ լոգիկա....

Մի խօսքով «Արձագանքի» այդ նկատողութիւնը մեզ համար տարօրինակ չէր. կապոյտ ակնոց դրած մարդիկ ամէն բան էլ կապոյտ են տեսնում:

Աբ. Ապրեսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍԻ գերմանական համայնքի լութերական եկեղեցու պաստօրը կազմել է մի յանձնաժողով, որը խօլերայի երևալու դէպքում պիտի ամէն կերպ օգնութիւններ հասցնէ կարօտեալներին առանց կրօնի խտրութեան:

—

Թիֆլիսաբնակ պ. Դօլմնով, Կուր գետի փրկարար նաւակների տէրը, հիմնում է իր հաշուով, Վ.օրմնցովի արձանի մօտ՝ մի ձրի թէյատուն չուներների համար:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Երևանի քաղաքային վարչութեան միակ թուրք անդամը երեք ամսով արձակուրդ է խնդրել և շատ հաւանական է որ կը ստանայ էլ այդ իր խնդրած արձակուրդը: Նա հակում էր մխիթարեան քաղաքային կապային: Իսկ այժմ, երբ խօլերա դեռ չը կայ, իսկ միւս կողմից քաղաքում և քաղաքային վարչութեան մէջ տիրում են՝ չոքերն ու պարապութիւն, —ինչի քաղաքային պաշտօնեաները չը պիտի արձակուրդ ստանան:»

—

ՐՕՍՏՕՎ Դոն գետի վրա քաղաքից մեզ գրում են, որ այդ քաղաքին նմանապէս սպառնում է խօլերան: Սակայն Բօստօվը, ինչպէս նկարագրում է թղթակիցը, գրեթէ միայն, արտաքուստ մաքուր ու փառաւոր է երևում, իսկ տների ներսը, բակերը, արտաքնոցները և քաղաքի բաղարն ու գետերը այն աստիճան կեղտոտ են, որ թղթակիցը հրաժարվում է նկարագրելուց: Անհնարաւորելի են նմանապէս Բօստօվ քաղաքի բաղմաթիւ արհեստաւոր, բանւոր ու թշուառ մշակ դասի կեղտոտ կացարանները: Սրանք քաղաքի աղտարնակութեան մեծամասնութիւնն են կազմում:

—

«Нива» պատկերազարդ շաբաթաթերթի № 24-ի մէջ տպված է Խրիմեան Հայրիկի պատկերը և նրա կենսագրութիւնը: Այդ կենսագրութիւնը, որը ստորագրված է Г. Д. գլխատառերով, վերին աստիճանի համակրութեամբ է վերաբերվում դէպի Հայրիկը:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Սարատովի չոքերից յետոյ յունիսի 20-ից միանգամից փոխվեց եղանակը: Մի երկու օր այդպէս ցրտեր արեց, որ ամառվայ հագուստով մարդ դալ չէր լինում: Մասիսի և Արագածի գագաթների վրա ձիւն է եկել: Գուցէ նախանշանութիւնը, չը ապասելով մեր կողմից զործ դրվելի ամենատարբեր միջոցներին՝ ազատելու էջմեզ խօլերայից, անտանելի չոք եղանակներին վերջ դնելով:»

—

ԲԱՆԱՆՑ գիւղից, յունիսի 24-ից մեզ գրում են. «Յունիսի 20-ին սաստիկ կարկուտը հանրեա խապտա ոչնչացրեց Բանանց գիւղին կից գտնվող Քարտաս և Կերանց հայաբնակ գիւղերի արտերը, որոնք յիշեալ գիւղերի համար ապրուստի միակ աղբիւր կարող են համարվել, քանի որ այդտեղ այգեգործութիւն կամ արհեստներ, ինչպէս Բանանցում ամենեին զոյութիւն չունեն: Վնասվել են մասամբ և Բանանց գիւղի արտերը, թէև շատ անաչան չափով: Քարտասում և Կերանցում ավերը մեծ է և եթէ աշխատանքի մի այլ աղբիւր չը գտնվի օր առաջ նրանց համար՝ այն ժամանակ թշուառութիւնը անտանելի կը լինի: Այդ գիւղերում կատարեալ սուգ է տիրում. այս տարվայ արտերը շատ էին, վերջին տարիներս բոլորովին չը տեսնված հունձ էին խոստանում և այդ հունձը շատ մօտ էր թվում խեղճ գիւղացիներին:»

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ մեզ գրում են. «Յունիսի 24-ին գիշերը, ժամի 11-ին, տեղիս հայոց եկեղեցու խորանում հրդեհ պատահեց և մօտ 300 բուբլու իրեղէններ այրվեցան: Հրդեհը առաջ է եկել անզգուշութիւնից, բայց թէ ով է մեղաւորը,—յայտնի չէ:»

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ մեզ գրում են և հետևեալը. «Տեղիս հայոց ուսումնարանների քննութիւնը յունիսի 10-ին արդէն վերջացել է, բայց ուսուցիչները մինչև այսօր իրանց ռոճիկը չեն ստացած: Խեղճերը դիմում են հոգաբարձութեան նախագահին, իսկ սա պատասխանում է թէ իր ձեռին է նորոգում և փող չունի: Երեցփոխ հոգաբարձուն, որի ձեռքին է այժմ ուսուցիչներին հասանելի ռոճիկը, պատասխանում է թէ երբ բացակայ հոգաբարձուն, որը գանձապահ է, կը գայ, այն ժամանակ ռոճիկները կը բաժանվին: Իսկ գանձապահը տարուց տարի կրկնում է թէ ուսուցիչներին ռոճիկ բաժանելիս, ինքն իր զբաղանից էր միշտ տալիս, քանի որ ուսումնարանի դրամարկղը միշտ դատարկ է:»

—

Մեզ գրում են ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱՑԻՑ հետևեալը. «Յունիսեան 25 օրվայ երաշտը սպառնում էր տապի ճարակ դարձնել Շիրակի, Աբարանի, Փամբակի և Լօռու ցանքերը: Գարնան սկզբում, վարուցանքի ժամանակ, պարբերական անձրևները թոյլ չը տուին գիւղացուն օր առաջ սերմելու իր դաշտերը, որի պատճառով բուսական աշացաս վարուցանքը: Եւ ահա վարուցանքը մի կերպ վերջանալուց յետոյ, անգութ երաշտը համարեա թէ խեղդեց ամբողջ բուսականութիւնը: Ցորենը 12 բուբլուց բարձրացաս մինչև 18, կամ նոյն իսկ 20 բուբլի: Վերջին օրերի անձրևները փոքր ինչ շունչ տուեցին արտերին, սակաւ յոյս էլ գիւղացուն: Սակայն վնասը անփոխարինելի է: Հազիւ թէ 16 բուբլուց իջնի ցորենի գինը: Այդպիսով գիւղացու քիչ հող և քիչ վարուցանք ունենալուն միացաս այս տարի և տարաբերելի երաշտն էլ:»

—

Մեր քաղաքի յետ ընկած մասերում բնակիչները սովորութիւն ունին քթոցներ պահել իրանց բակերում, որոնց մէջ ածում են աղբը, և շաբաթը մի անգամ դէն են ածել տալիս այդ աղբը՝ վճարելով մի քանի կոպէկ Տաճկաստանից եկած քիւրդ մշակներին: Այժմ, խօլերա յայտնվելուց յետոյ, այդ մշակներից շատերը քաշվել, գնացել են իրանց երկիրը, և այժմ մշակների մեծ պակասութիւն կայ քաղաքում. այնպէս որ առաջ մի քթոց աղբ դէն ածելու համար հարկաւոր էր վճարել 3—5 կոպէկ, իսկ այժմ 20 կոպէկով էլ դժուար է նոյն աղբը դէն ածել տալ: Թիֆլիսի աղքատ դասակարդը այժմ անելանելի դրութեան մէջ է մնացել և չը գիտէ թէ ինչ անի. նա մի կողմից միջոցներ չունի, իսկ միւս կողմից պօլիցիան սպիտում է տները և բակերը մաքուր պահել: Արդեօք լաւ չէր լինի, որ քաղաքային վարչութեան այն բանտարները, որոնք ասելում են փողոցները, անցնելով իրանց սայլերով տների առաջ, լցնէին տներում կուտակված աղբը իրանց սայլերում, և փողոցի աղբի հետ միասին դէն ածէին: Եթէ ոչ աղքատ դասակարդը միջոցներ չունենալով և միւս կողմից վախենալով պօլիցիայից, կը սկսի աղբը ծածկել դատարկ քանչ ու պուճախներում, այդպիսով ակամայ խօլերայի տարածման նոր աղբիւր դառնալով:

—

«Արձագանքը» արտատպոր եռանդով հետադրութիւններ է անում և տպագրում է թէ եկող տարի ովքեր պէտք է հրաւիրվին ճեմարան ուսանելու: Ինչպէս երևում է այդ հարցը շատ է հետաքրքրում այդ թերթի աշխատակից-վարժապետներին: Մենք չը գիտենք տարբերակարար թէ ովքեր պիտի հրաւիրվին ճեմարան,—այդ ճեմարանի վարչութեան գործն է. բայց հաւանականութեան թեորիան մեզ իրաւունք է տալիս հաստատապէս ասելու, որ ի հարկէ, չեն հրաւիրվի «Արձագանքին» բարեկամ այն վարժապետները, որոնք աւելի ինտրիգայի մէջ են հմուտ, քան մանկավարժութեան:

—

Լսում ենք, որ հռչակաւոր նկարիչ Այվազովսկի իր նկարների պատկերահանդէս պէտք է կազմի Զիկատոյի ցուցահանդէսում, ուր ինքն անձամբ մոտիր է գնալ:

—

Թիֆլիսում վերջին օրերս կրկին անտանելի չոք սկսվեց:

—

Հազար անգամ ասել, հանկարդրել են, որ քաղաքի փողոցները պէտք է մաքրել վաղ առաւօտեան, երբ ժողովուրդը դեռ ոտի վրա չէ: Բայց քաղաքային վարչութիւնը էլի անուշադրութեան է տալիս, և էլի քաղաքի փողոցները մաքրում են,—երևակայեցէք, նոյն իսկ երեկոյեան 6 կամ 7 ժամին, երբ բաղմութիւնը դուրս է գալիս մի փոքր օդ ծծելու և օդի տեղ կուլ է տալիս ամպի նման բարձրացող անտանելի փոշին:

—

Թիֆլիսի ավտոմոբիլների կալուածական բանկը որոշել է 12,000 բուբլի տալ, որպէս զի այդ փողով միջոցներ ձեռք առնվին խօլերայի դէմ կռուելու համար:

—

Առաջարկում ենք Թիֆլիսի քաղաքային վարչութեանը կարգադրել, որ Թիֆլիսի բոլոր բժիշկների տպված անունները և հասցէները կցվին փողոցներում յայտարարութիւնների սիւների վրա, որպէս զի ցանկացողները այդտեղից իմանան թէ, որ բժիշկը որտեղ է ապրում, և դիմեն հարկաւոր ժամանակը նրա օգնութեան:

—

Յայտնում ենք Թիֆլիսի հասարակութեան, որ սրանից յետոյ քաղաքային բոլոր բժիշկների հասցէները կարելի է իմանալ և փողոցներում կանգնած ստիկաններից, որովհետև կարգադրված է, որ այդ ստիկաններն իրանց մօտ պահեն հասցէները և հաղորդեն ցանկացողներին: «Մշակի» յայտարարութիւնների բաժնում մենք կը տպագրենք շաբունակաբար այդ բժիշկների անունները և մասնաւոր հասցէն:

—

«Астраханскій Листокъ»-ի մէջ տպագրված է այն խառնակութիւնների մասնաւոր նկարագրութիւնը, որոնք տեղի են ունեցել այդ քաղաքում, և որոնց մասին հեռագիրը մեզ լուր բերեց: Նոյնագոյն հեռագիրներից երևում է, որ նոյնանման խառնակութիւններ են տեղի ունեցել և Սարատովում:

—

Նիժեգորոդեան տօնավաճառը դեռ պարսկական տպրանք չէ գալիս, ինչպէս հաղորդում են Մոսկվայի լրագիրները, մինչդեռ ուրիշ տարիներ այդ տպրանքը սկսում էր տատգվել արդէն յունիսից: Կարծում են, որ դրա պատճառը կարանտինները են:

—

Օդեսա եկող նաւերը գնում են Կենթարիվեն, խօլերայի պատճառով:

—

Ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, Կովկասեան ծխախոտ արդիւնաբերողները և գինեգործները հրաւէր են ստացել մասնակցելու Զիկատոյի ցուցահանդիսին:

—

Թիֆլիսի երկաթուղային վարչութիւնը այս օրերս քննութեան է ենթարկում Թիֆլիս-Բաթումեան երկաթուղային գիծը, որպէս զի միջոցներ ձեռք առնվին գէպի Բաթումի կողմերը խօլերայի տարածման առաջն առնելու համար:

—

Թիֆլիսի մի քանի բժիշկների մէջ, նախաձեռնութեամբ բժշկապետ Ադամեանի, միտք է յղացել պատրաստել մի խումբ կլոր-սպասաւորներ, ուղարկած քոյրեր և ծառաներ, որոնք ծանօթանալով խօլերայով հիւանդ պահելու գործին, կարող կը լինեն օգնութիւն հասցնել այն հիւանդներին, որոնք կամենում են բժշկվել իրանց տանը: Ամէն մարդ վճար տալով՝ կարող կը լինի հիւանդ ժամանակ այդպիսի փորձված սպասաւոր հոգատարներ ունենալ իր տանը:

—

Սկվերում բացված թէյատունը արդէն սկսել են ձրի թէյ տալ աղքատներին: Տարաբաղդաբար առ այժմ շատ քչերն են ուզում վայելել այդ սիրալիր օգնութիւնը:

—

Ինչպէս երևում է, Բաքուում մնացած ժողովուրդը ուտելեղէնի մեծ պակասութիւն է զգում: Քաղաքում ոչ բաւական քանակութեան հաց է գտնվում, և ոչ մսեղէն: Եղածն էլ մեծ մասամբ վարակված կարելի է համարել: Կովկասեան կառավարչապետ Շերեմետեվ, Բաքու եղած ժամանակ, խոստացել է քաղաքացիներին հոգալ այդ մասին, որպէս զի Թիֆլիսից հացտեն հարկաւոր մթերքները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Խօլերայի տարածվելու դէմ Կ. Պոլսում, որպէս գրում են «Polit. Corresp.» լրագրին, արդէն կարանտինային միջոցներ են ձեռք առնված Բոսֆորի մուտքի մօտ, բայց և գործադրվում են ուրիշ առողջապահական միջոցներ: Օրինակ, սկսել են մաքրել քաղաքի յետ ընկած մասերը, և խիստ հսկողութիւն է նշանակված կամուրջների վրա և փողոցներում վխտող բազմաթիւ աղքատների վրա:

—Լօնդոնից հաղորդում են, որ Գլադստոն արդէն չնորհաւորութիւններ է ընդունում առաջիկայ ընտրութիւնների բարեյաջող վախճանի համար:

—Վիէննայում լուրեր են պատում, որ խօլերա երևացել է Պեշտում: Վիէննայի մի լրագրին հեռագրում են մինչև անգամ Պեշտից, որ արդէն խօլերայով հիւանդանալու մի քանի դէպքեր լինելու պատճառով, այնտեղի քաղաքային վարչութիւնը զգուշութեան ընդարձակ միջոցներ է ձեռք առնում, և ի միջի այլոց մտադրութիւն ունի մի հիւանդանոց կառուցանել խօլերայով հիւանդների համար:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

—

Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում յուլիսի 2-ին առաւօտեան խօլերայով հիւանդներ կան 15 տղամարդիկ և 2 կանայք. օրվայ ընթացքում հիւանդանոցը մտան 4 տղամարդիկ՝ Վ.նացէլ՝ ՑերՍտեփանովի անից, Նարելբեժնայա փողոցի վրա, Ջօմաշ (Զէրնօմօրեան հետեակ գնդի զինուոր) Միլոլի անից, Դավիդովսկայա հրապարակի վրա,

Մակսիմով (կաղէտների կօրպուսի դռնապան) Կալօվի մոնից, Ալտիլերիյսկայա բալկա անուանված Թաղից և Ստեաչկին՝ Բարդինովի մոնից Սաղի վրա, 2-րդ քաղաքամասում։ Դուրս գնաց օրվայ ընթացքում մի կին՝ Պիչկովա ազգանունով. մեռան երկու տղամարդիկ։ Երեկոյեան, յուլիսի 2-ին, խօլէրայով հիւանդներ կան հիւանդանոցում՝ 17 տղամարդիկ և մէկ կին. գիշերվայ ընթացքում եկան 2 տղամարդիկ՝ Մամէդ-օղլի Քերբալայ, Մամէդ-օղլիի տանից, Զիթախօվի գործարանի դիմաց, Վօրոնցովսկայա փողոցի վրա, 6-րդ քաղաքամասում և Էյվազով, Գամազովի տնից, Գէօրգիեվսկայա հրապարակի վրա, 5-րդ քաղաքամասում. գիշերվայ ընթացքում մեռաւ մէկ տղամարդ՝ Էյվազով. յուլիսի 3-ին առաւօտեան կան 18 տղամարդիկ և մէկ կին հիւանդներ։ Բացի դրանից, յուլիսի 3-ին, առաւօտեան, 7-րդ քաղաքամասում հիւանդացաւ խօլէրային նշաններով մի բանւոր Թամամշեվի ջրաղացից, Սկիրիկաշվիլի անունով։ Հիւանդը հիւանդանոց է ուղարկված։ Նրա բնակարանի և իրեղէնների դէզինֆէկցիայի մասին հաղորդված է բժշկի-դէզինֆէկտոր Բաղամատին։—Թիֆլիսի գաւառում, Գամբօր գիւղում, խօլէրայով հիւանդանալու մի դէպք եղաւ։

Բագուի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 1-ին խօլէրային հիւանդանոցը մտան 17 հոգի, դրանցից եկօղներ 12. հիւանդների ընդհանուր թիւից մեռան 19, եկօղներ 13, առողջացան 13, մնացին հիւանդանոցում 135, եկօղներ 94. հիւանդանոցներից դուրս մեռան 37, եկօղներ 14. Սալեանի պահեստի զօրքի հիւանդանոցը մտան 2, մեռաւ 1, մնացին 27. Նահանգում հիւանդացան 35 հոգի, մեռան 18.

Ելիսաւետպօլի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 1-ին Շուշի քաղաքի հիւանդանոցը մտան 12, մեռան 4, առողջացան 19. ընդհանուր թիւից մեռան 16, կան 3 հիւանդներ։ Ջէվանշիրեան գաւառում հիւանդացան 20, ընդհանուր թիւից մեռան 7, կան 25 հիւանդներ։ Զանգեզուրի գաւառում կան 30 հիւանդներ. Ղազախի գաւառում հիւանդացաւ 1, կայ 1 հիւանդ։ Ելիսաւետպօլ քաղաքի հիւանդանոցը մտաւ 1 հիւանդ, կան 2 հիւանդներ. Ելիսաւետպօլի գաւառում հիւանդացան 4, մեռաւ 1, կան 3 հիւանդներ, ընդամենը նահանգում կան 94 հիւանդներ։

Դաղստանի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 1-ին Թէմիրխանշուրայի մի բնակիչ Դարգինեան շրջանից տուն վերադառնալիս, ճանապարհին մեռաւ ասիական խօլէրայից. դիակը բերեցին և թաղեցին քաղաքից դուրս։ Մի ուրիշը, Կազիկումուխեան բնակիչ, Տէրեքի շրջանից Թէմիրխանշուրա վերադառնալու ժամանակ, հիւանդացաւ խօլէրայանման նշաններով և զետեղված է հիւանդանոցում։ Պետրովսկում կրկին հիւանդացաւ 1, մեռաւ 1. Կիւրինեան, Սամուրեան, Դարգինեան և Կայտագո-Ցօբասարանեան շրջաններում հիւանդացան 29 հոգի, մեռան 23, առողջացան 4, մնում են Շուրայում 1, Պետրովսկում 2, Կիւրինեան շրջանում 12, Սամուրեան շրջանում 2, Դարգինեան շրջանում 20 և Կայտագո-Ցօբասարանեան շրջանում 13.

—

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յուլիսի։ Նոցա Կայսերական Մեծութիւնները Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրօվիչի և Կսենիա ու Օլգա Ալէքսանդրօվնա Մեծ Իշխանուհիների հետ երէկ $5^1/_2$ ժամին կէսօրից յետոյ ժամանեցին Պետերհոֆ։—Յունիսի 23-ից մինչև 30-ը առանձին մանաժողովն ստացել է 35,936 ր., որոնց թւում և 17,231 ր. ֆինանսների մինիստրութեան պաշտօնեաներից և հիմնարկութիւններից և 5,000 ր. բարօն Շոէյնդէլից։

ՊԱՐԻԶ, 1 յուլիսի։ Մինիստրների այսօրվայ կայացած նիստում նախագահ Կարնօ ստորագրեց 1900 թվի մայիսի 5-ին համաշխարհային ցուցահանդէս բանալու հրամանագիրը։—Բօնդէվիլից հեռագրում են, որ այսօր առաւօտեան 3 ժամին Բիօնասիի սառցակոյտի մի մասը պոկվեց Մոնբլանից. Սեն-Ժերվէ բժշկանոցը և Դիւֆայէ փոքրիկ գիւղը քարոքանդ արաւ և հոսանքը տարաւ. 150 հոգուց աւելի սպանվեցան. Արվա գետի երեսին լողում են դիակները և զանազան առարկաներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յուլիսի։ «Правит. Вѣстникъ» լրագրում հրատարակված են խրատներ՝ խօլէրայից անձնապէս պաշտպանվելու միջոցների մասին։—Յունիսի 28-ին Սարատովում ժողովրդի ամբոխը, այն անմիտ լուրերի ազդեցութեան տակ, որ իբր թէ տեղական հիւանդանոցների բժիշկները թաղում են կենդանի մարդկանց, փողոցային խռովութիւն յարուցեց, և չը նայելով քաղաքացիական իշխանութիւնների երկարատև յորդորներին՝ կողոպտեց 1-ին ոստիկանական բաժինը, պօլիցիմէյստերի բնակարանը, մի քանի բժիշկներին և ժամանակաւոր խօլէրային հիւանդանոցը, որտեղից դուրս հանեց 17 հոգի հիւանդներ։ Ամբոխի զրդռմունքը այն տեղը հասաւ, որ նա բռնութիւն գործ դրեց հիւանդանոցի ծառաների և մատնաւոր անձանց վրա, որոնց ժողովուրդն ընդունում էր սանիտարների տեղ. սպանված են երկու մարդիկ։ Հէնց անկարգութիւնները սկսելու ժամանակ, բանակից կանչված զօրքերը ստիպված էին՝ բռնութիւնների առաջն առնելու համար, զէնք գործ դնել և հրացանաձգութեան ժամանակ սպանվեցան 3 մարդիկ և վիրաւորվեցան 4 հոգի. անկարգութիւնները դադարեցրած են և յանցաւորները պատասխանատուութեան են ենթարկվում։—Յունիսի 29-ին Աստրախանի հիւանդանոցները մտել են 37 հոգի, մեռան 9, հիւանդանոցներից դուրս 92. հիւանդանալու դէպքեր կային և գաւառներում. Սարատովի հիւանդանոցները մտան 9, առողջացան 4, մեռաւ 1. Նախընթաց օրը գաւառներում հիւանդացան 70, մեռան 51. Մի շաբաթ առաջ Սիմբիրսկի ընդհանրան-հիւանդանոցները մտան 20, մեռան 11. Յունիսի 29-ին Սամարայում Պոկրովսկայա արուարձանի հետ, հիւանդացան 48, առողջացան 3, մեռան 20, Բագում և շրջականներում հիւանդացան 47, մեռան 29, առողջացան 15. հիւանդանոցներից դուրս մեռան 36 հոգի։

ՊԱՐԻԶ, 2 յուլիսի։ Ցայտարարված է որ Բիւրդօ նշանակված է ծովային մինիստր։—Սալանչից հաղորդում են հետեւեալ մանրամասնութիւններ Սէն-Ժերվի աղետի մասին.—սպանվածների թիւը հասնում է մինչև այժմ 140-ի. բայց հաւանօրէն նրանց թիւը կը հասնի 200-ի. լողարաններում ծառայող 54 հոգուց փրկվել են միայն 9 մարդ. ինքը լողարանը համարեա բոլորովին ոչնչացել է հեղեղից, իսկ Ֆաիէ գիւղը կիսով չափ աւերված է. դիակները դուրս են բերվում սարսափելի այլանդակված կերպարանքով. չատերին մինչև իսկ ճանաչել անհնարին էր, վիրաւորվածները չատ չատ են. սկսված է օգնութիւն մատակարարելը և ազգաբնակութիւնը ցոյց է տալիս զարմանալի եռանդ և անձնազոհութիւն։—Պարլամենտական նստաշրջանը փակված է։ Ծովային մինիստր Բիւրդօ հրամայեց գնդապետ Դօղուէսին յանձն առնել ծովային և ցամաքային այժերի հրամանատարութիւնը Դահոմէյում։

ՍՕՖԻԱ, 2 յուլիսի։ Բելչեվի գործի վերաբերեալ մեղադրական ճառում պրօկուրօրը պահանջեց մահվան դատապարտել Մալլարովին և Պոպովին։

ՏԵՂԵԿԱՑՈՒՑՑ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ճանապարհորդական գնացքներ Թիֆլիսի և Բաթումի մէջ.

№ 1

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է . . . . 9 ժ. 45 ր. առաւ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . . 9 » 52 » երեկ.

№ 2

ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . . 9 ժ. 30 ր. առաւ.
ԲԱԹՈՒՄ հասնում է . . . . 9 » 45 » երեկ.

Պոստային գնացքներ Բաթումի և Բագուի մէջ.

№ 3

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է . . . . 11 ժ. 25 ր. երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . . 12 » 25 » ցերեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . . 1 » 20 » ցերեկ.
ԲԱԳՈՒ հասնում է . . . . . 7 » 30 » առաւ.

№ 4

ԲԱԳՈՒԻՑ մեկնում է . . . . 9 » — ր. առաւ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . 7 » 30 » առաւ.

—

ՌՈՒՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈԳԵՆԱՒԵՐ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 4 ժամին երեկոյեան Բաթումից ուղղակի ըէյս Սուխումի և Նովօրոսիյսկի վրայով դէպի Օդէսա.

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 4 ժամին երեկոյեան, ուղղակի ըէյս Նովօրոսիյսկի վրայով դէպի Օդէսա.

ԿԻՐԱԿԻ $11^1/_2$ ժ. երեկոյեան արագ ըէյս՝ Եալտա, Սեվաստօպոլ, Օդէսա.

ԿԻՐԱԿԻ, 2 ժ. գիշերվայ շրջական ըէյս բոլոր նաւահանգիստներով՝ դէպի Օդէսա.

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 7 ժամին երեկոյեան, Բաթումից դէպի Կ. Պոլիս։

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թավրիզի Լիլաւայ Թաղի համար հարկաւոր է մի վարժուհի կար ու ձեւի կամ ձեռագործութեան և հայոց լեզուի համար և մի ուսուցիչ՝ ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։ Ցանկացողներին խնդրում ենք դիմել Յոհան Դաւթեանին, Միքայէլեան փողոց, № 52, բնակարան Մատինեանցի։

(№ 75) 1—5

ՅՈՒՆՎԱՐԻ 6-ին 1892 Թ. ԹԻՖԼԻՍՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՂԵՏԻՑ ՄԵՌԱԾ ԱՆՁԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԲԱԺԱՆՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Ցայտնում է յիշեալ ընտանիքներին, որ նա օժանդակութիւն է որոշել ստորև յիշված անձանց հետեւեալ քանակութեամբ.

№№ կարգով	Մեռածների անունները և ազգանունները	Օժանդակութեան չափը	Ո՞վ պէտք է ստանայ։
		ռուբ.	
1	Սիմէօն } Սուքիասեաններ.		
2	Սուքիաս }	600	Մայրը։
3	Սարգիս Ազատեան.	500	Մայրը և կինը հաւասար չափով։
4	Սարգիս Դաւթեան.	400	Հայրը կամ մայրը։
5	Մաղաքիա Սիմեոնեանց.	500	Կինը։
6	Գէորգ Տէր-Յակովբեան.	500	Հայրը կամ մայրը։
7	Գէորգ Միրզախանեան.	550	100 ր. մայրը, 450 ր. կինը։
8	Գէորգ Շարոյեան.	500	Կինը։
9	Յարութիւն Սահամեան.	375	Հայրը կամ մայրը։
10	Եփրեմ Վերմիշեան.	400	Մայրը։
11	Պետրոս Բաղրամեանց.	375	Հայրը կամ մայրը։
12	Ալէքսանդր Գրիգորեանց.	350	Մայրը։
13	Կարապետ Քոչարեան.	325	Յանձնված է Թիֆլիսի քաղաքային ուսումնարանների չքաւոր աշակերտներին նպաստող ընկերութեանը, որը ամսական 6 ռուբլի կը վճարէ Քոչարեանի եղբայրներից այն մէկին, որին հայրը մատնացոյց կանէ։
14	Կարապետ Քայախեան.	575	Յանձնված է նոյն ընկերութեանը, որը Քայախեանի երկու եղբայրներին կը վճարէ ամսական 12 ռուբլի։
15	Յովհաննէս Գէուրգեան.	250	Մայրը։
16	Դաւիթ Լափերաշվիլի.	400	Հայրը կամ մայրը։
17	Թովմաս Սաղոյեանց.	300	Կինը։
18	Յարութիւն Յարութիւնեան.	350	Մայրը։
19	Յովհաննէս Հաջիմահմուդեան.	325	Հայրը կամ մայրը։
20	Շաքրօ Յարութիւնեան.	350	Հայրը կամ մայրը։
21	Պողոս Պապեանց.	330	Հայրը կամ մայրը։
22	Տիգրան Վիլվիլեանց.	300	Կինը։
23	Սիրական Շարոյեանց.	400	Մայրը։
24	Վասիլի Վերմեանց.	400	Հայրը կամ մայրը։
25	Սարգիս Տէր-Առաքելեան.	330	Մայրը։
26	Իսահակ Մինասեան.	300	Հայրը կամ մայրը։
27	Գրիգոր Գաղիկեանց.	250	Կինը։
28	Հայրապետ Բաբաջանեան.	400	Կինը։
29	Գէորգ Փարեմուզեան.	380	Հայրը կամ մայրը։
30	Թէոդորոս Խառատեանց.	400	Հայրը կամ մայրը։
31	Դաւիթ Բաղդասարեանց.	375	Մայրը։
32	Եակով Կուպրաւա.	450	Հայրը կամ մայրը։
33	Նիկոլայ Գրուբելաձէ.	300	Երկու եղբայրները հաւասար չափով։
34	Գեղամ Բախքեչեան.	300	Մայրը։
35	Սարգիս Մաշրուբեան.	200	Հայրը։
36	Յարութիւն Վարդանեան.	250	Կինը։
37	Սարիբէկ Փարսադանեան.	300	Մայրը։
38	Աղետից վնասված. Աղալօ Ռոստոմեան.	200	Մայրը Նատալիա Ռոստոմեան։
	Գումարը .	13790	

1) Վերոյիշեալ ազգականները մեռածների՝ օժանդակութիւն ստանալու համար ներկայ տարվայ յուլիսի 1-ից թող դիմեն Թիֆլիսի Քաղաքային Վարչութեան անձամբ կամ օրինաւոր հաւատարմատարների միջոցով. թէ առաջինները և թէ վերջինները պարտաւոր են ցանձնաժողովին ներկայացնել անձնացոյց վկայական, հաստատված իշխանութիւնից օրինական ձեւով։

2) Հաւատարմագրի, նոյնպէս և ստորագրութիւնների օրինակները ցանկացողները կարող են ստանալ Քաղաքային Վարչութեան գրասենեակում։ 2—2

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Թիֆլիս, Սօլօլակսկայա փողոց, տուն Աղաբաբօվի, Ամառնային գործնական հիւսուածքներ, ձեռքի պատրաստութեան՝ տիկինների զգեստների, մանուկների զգեստների և պարոնների շապիկների համար։

Մեծ ընտրութիւն լայն սարպինկաների՝ նախշով։

Սարպինկայի գուլպաների թել, սադա, գոյնզգոյն։ Ներկերը տեւողական են։

Սարպինկայի զգեստներ արկղներում 3 ռուբլուց սկսած մինչև 60 կօպէկ։

Սարպինկայի իւրկաներ 1 ր. 80 կ. և աւելի թանգ։

Սարպինկայի քթի աղլուխներ և գլխի թաշկինակներ։

ՖԱԲՐԻԿԱՆՏՆԵՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԲԷՆԴԷՐ ԵՒ ՍՏԵՊԱՆՕՎ

(№ 47) 21—30

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԵՐ.

1) Հանդերձների և սպիտակեղէնի ձեւի դասեր Գլօդզինսկու մեթօդով և Շէդզէր ֆրանսիական մեթօդով։

2) Կարի դասեր մօդային ժուրնալներով։

3) Հարթակարի և զանազան ձեռագործերի դասեր։

4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար։

Վճարը ամսական 2 ռուբլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկոյեան։

Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ձրի։ (№ 23) 36—40

Дозволено цензурою, Тифлисъ, 3 Іюля 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 22.